ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
29.08.2023 թ. կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1
գնման պայմանագրի

ք. Երևան «16» հուլիսի 2024 թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ.Ավետիսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև կողմեր), ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և հիմք ընդունելով 29.08.2023 թվականին կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության 01.07.2024 թվականի թիվ Ն/35593-24 գրության կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին

1. Պայմանագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքում Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքների դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 247850000 (երկու հարյուր քառասունյոթ միլիոն ութ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի գնի մնացած 1620192000 (մեկ միլիարդ վեց հարյուր քսան միլիոն մեկ հարյուր իննսուներկու հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր

1.2 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելված թիվ 1-ի:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի կատարվելիք աշխատանքների օրացուցային գրաֆիկը՝ համաձայն հավելված թիվ 2-ի:

1.4 Պայմանագրի N 1 հավելվածի ծավալաթերթ-նախահաշվի «Միավորի ընդհանուրի արժեքը հազար դրամ» բառերի փոխարեն հիմք ընդունել «Միավորի արժեքը ՀՀ դրամ» բառերը, իսկ «Ընդհանուր արժեքը հազար դրամ» բառերի փոխարեն հիմք ընդունել «Ընդհանուր արժեքը ՀՀ դրամ» բառերը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված են 3 էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ***Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Երևանի քաղաքապետարան	«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	ք. Երևան, Նեկրասովի 86
ՀՀ ֆինանսների նախարարության	«Ամերիաբանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 1570015559920100
Հ/Հ 900012001351	ՀՎՀՀ 00450801
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Գ.Ավետիսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
29.08.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրի
«15» հուլիսի 2024թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211198/503	Երևան քաղաքում՝ Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքներ	...	...	...	...	...	...	89000000	89000000	89000000	247850000	247850000	247850000	247850000

*Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012001351
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք.Երևան, Նեկրասովի 86
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ.Ավետիսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
29.08.2023թ. կնքված թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրի
«16» հուլիսի 2024թ. կնքված թիվ 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ՝ ՋՐՎԵԺՈՒՄ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքում՝ Ջրվեժում ավտոբուսային հավաքակայանի վերակառուցման աշխատանքներ	Շինարարական աշխատանքներին զուգընթաց տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո	70-րդ օրացուցային օրը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900012001351
ՀՎՀՀ 02593108

Վ.Պապիկյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԲԻԴԵՔ» ՍՊԸ
ք. Երևան, Նեկրասովի 86
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570015559920100
ՀՎՀՀ 00450801

Գ.Ավետիսյան----------
(ստորագրություն)
Կ.Տ.

AMERIABANK

09.07.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.12265.24

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.12265.24
(ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) կողմից ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) կողմից 29.08.2023թ. կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ՝ Պրինցիպալի որակավորման (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհտ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել վճարել 74,587,768.00 (յոթանասունչորս միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 18 սեպտեմբերի 2024թ.-ի օրվան հաջորդող իններորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 03 փետրվարի 2025թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը,

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

09.07.2024թ.
O.AB.100.12CIB.PIED.0.12255.24

Բենեֆիցիար՝
Երևանի քաղաքապետարան

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.12255.24
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 29.08.2023թ. կնքված N ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 24,862,590.00 (քսանչորս միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար հինգ հարյուր իննսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև 18 սեպտեմբերի 2024թ.-ի օրվան և ևս 365 օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 03 փետրվարի 2026թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ vachagan.mejunc@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ԵՔ-ՀԲՄԱՇՁԲ-23/1 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

«AMERIABANK» OSC CORPORATE AND INVESTMENT DEPARTMENT FOR CONTRACTS AND DOCUMENTS

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou